Կ Ա Ր Ծ Ի Ք

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի դոկտորական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությանը, սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրներին:

Խնդրո առարկան խիստ արդիական է, քանի որ համաշխարհայնացման և ազատականացման արդի ժամանակաշրջանում մարդկանց տեղաշարժերը և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ են ունենում, լուրջ հիմնախնդիրներ ստեղծում ելքի ու մուտքի երկրների համար: Վերջին հարյուրամյակում բնական և սոցիալական աղետները՝ պատերազմները, ահաբեկչությունները, քաղաքական հակասություններն ու ռեժիմի փոփոխությունները, սոցիալ-տնտեսական դժվարությունները, կրոնական հալածանքները, ռասայական, ազգային և այլ հիմքերով խտրականության դրսևորումները, բռնությունը, թրաֆիքինգը և այլ պարտադրված ու կամավոր երևույթներ պարարտ հող են ստեղծում միգրացիոն գործընթացների համար:

Տարեց տարի աշխարհում աճում է իրենց պետություններից արտագաղթածների, օտար ափեր հասած օրինական և անօրինական միգրանտների թիվը, ինչը խիստ մտահոգիչ է և առաջացնում է միգրանտների իրավունքների ու ազատությունների թե՛ ներպետական, թե՛ միջազգային իրավական պաշտպանության անհրաժեշտություն:

Արտագաղթը Հայաստանի Հանրապետության առջև ծառացած լուրջ մարտահրավեր է, որը համակողմանի գիտական ուսումնասիրություն և վերլուծություն է պահանջում, հրամայական դարձնում պետության կողմից հատուկ միջոցների ձեռնարկումը, միգրացիոն գործընթացների կարգավորման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական և կազմակերպական հիմքերի ապահովումը, արդյունավետ կառուցակարգերի կիրառումը:

Հայ իրավագետների կողմից միգրացիոն գործընթացների կարգավորման նորմատիվ իրավական հիմքերի վերաբերյալ ամբողջական և խորքային գիտական

ուսումնասիրություն դեռևս չի կատարվել: Ուստի, Աշոտ Հայրապետյանի դոկտորական ատենախոսությունը կարելի է համարել նշված թեմայով առաջին գիտական հետազոտությունը:

Ատենախոսության արդիականությունը հիմնավորվում է ոչ միայն Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը և դրա սահմանադրաիրավական կարգավորման տեսական ու գործնական բնույթի հիմնախնդիրները գիտական ուսումնասիրության առարկա դարձնելու փաստով, այլև միգրացիոն գործընթացների օրենսդրական կարգավորման ոլորտում առկա բացերը վեր հանելու, անորոշություններն ու հակասությունները բացահայտելու, ինչպես նաև միջազգային իրավական ակտերում ամրագրված սկզբունքների և արտասահմանյան երկրների առաջավոր փորձի հաշվառմամբ մատնանշված բացերը լրացնելու, անորոշությունները հնարավորինս հստակեցնելու և լուծումներ առաջարկելու նպատակադրումով:

Աշխարհաքաղաքական արդի վայրիվերումների և տարածաշրջանային բուռն, հաճախ վտանգավոր զարգացումների համատեքստում պետության արդյունավետ միգրացիոն քաղաքականությունն ազգային անվտանգության համակարգի կարևոր բաղադրիչն է, որը կարիք ունի գիտականորեն հիմնավորված մոտեցումների և սահմանադրա-իրավական կարգավորման ճկուն կառուցակարգերի մշակման ու կիրառման:

Ատենախոսության ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ ներկայացված հետազոտությունն ունի պատշաճ նորմատիվ իրավական, աղբյուրագիտական, մեթոդաբանական հիմքեր, հստակ գիտական ոճ, հետազոտության նպատակին ու խնդիրներին համապատասխանող կառուցվածք:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք ներառում են տասնութ ենթագլուխ, եզրակացություններ ու առաջարկություններ բովանդակող ամփոփիչ մասից, երկու հավելվածից, օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և մասնագիտական գրականության ցանկից:

Ներածական մասում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, տեսական, օրենսդրական և մեթոդաբանական հիմքերը, բացահայտվում ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է միգրացիայի տեղի ու դերի սահմանման տեսական-իրավական հիմնահարցերին:

Առաջին գլխի առաջին ենթագլխում բացահայտվում են միգրացիայի էությունը, պատճառները, իրավական բովանդակությունն ու նշանակությունը:

Հեղինակն իրավացիորեն նշում է, որ «Միգրացիան բովանդակային առումով բարդ, տարատեսակ, հաճախ անկանխատեսելի դրսևորումներով, դժվար կառավարելի հասարակական երևույթ է: Այն իր մասշտաբայնությամբ և գործընթացում ընդգրկված մարդկանց ակտիվությամբ հսկայական ազդեցություն է թողնում պետությունների, դրանցում բնակվող ժողովուրդների սոցիալ-տնտեսական, կրթամշակութային զարգացումների վրա» (ատենախոսության էջ 27):

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության տեսական, իրավական հիմունքները:

Համամիտ ենք ատենախոսի այն եզրահանգմանը, որ ժողովրդավարական երկրների միգրացիոն քաղաքականության կողմնորոշիչները համընդհանուր, միջազգայնորեն ճանաչված տեսակետներն ու մոտեցումներն են: Միաժամանակ, յուրաքանչյուր պետություն, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ելակետ ունենալով երկրի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, հասարակական-քաղաքական զարգացումների առանձնահատկությունները, մշակում և կյանքի է կոչում միգրացիոն գործընթացների կարգավորման իր հայեցակարգը:

Նման հայեցակարգի կենսունակությունն ապահովելու համար կարևորվում են երկրում միգրացիոն իրավիճակի մշտադիտարկման իրականացումը և միգրացիոն գործընթացների առաջիկա տարիների զարգացումների գիտականորեն հիմնավորված կանխատեսումները (էջ 46):

Աշոտ Հայրապետյանը նշում է, որ ՀՀ միգրացիոն քաղաքականության տեսական և իրավական հիմունքներն ամփոփ ներկայացված են Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունում (էջ 59):

Ըստ ատենախոսի՝ ռազմավարությունը ենթադրում է Հայաստանի իշխանության գործադիր մարմինների և ոլորտի կառավարման այլ պատասխանատուների համակարգված ու հետևողական միգրացիոն քաղաքականության իրականացում, որի ելակետը մեր երկրի ներպետական զարգացումներն ու արտաքին գործոններն են: Սակայն, հեղինակը նկատում է որոշակի հակասություններ մի կողմից Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն քաղաքականության տեսական հիմնադրույթների համակողմանիության ու նպատակաուղղվածության և մյուս կողմից՝ դրանց գործնական կիրառման միջև, այդ հակասությունների հիմնական պատճառներ

համարելով երկրի սոցիալ-տնտեսական անհամաչափ զարգացումը և հասարակության անդամների մի մասի կողմից իրենց ապագայի սպասելիքները հայրենիքում իրագործելու հնարավորությունների բացակայության գիտակցումը (էջ 61):

Առաջին գլխի երրորդ ենթագլխում ուսումնասիրվում են միգրացիոն գործընթացների միջազգային իրավական կարգավորման հիմնախնդիրները, ոլորտի կանոնակարգմանն ուղղված նորմերն ու սկզբունքները և նրանց գործնական նշանակությունը:

Հեղինակն ուսումնասիրում է միգրացիոն գործընթացների կարգավորմանը միտված միջազգային նորմերի և սկզբունքների երկու խումբ: Առաջին խումբը կազմում են ընդհանուր նորմերը, որոնք կիրառելի են բոլոր անձանց նկատմամբ, այդ թվում՝ որոշակիորեն վերաբերում են միգրանտներին: Ընդհանուր բնույթի իրավանորմերը սահմանված են հումանիտար բնույթի տարբեր համաձայնագրերում և ներառում են անձի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի, աշխատանքի, ազատ տեղաշարժի և այլ իրավունքների ու ազատությունների ապահովման մասին դրույթներ: Իսկ երկրորդ խումբը ներառում է իրավական այն նորմերը, որոնք վերաբերում են բացառապես միգրանտների իրավունքների և ազատությունների հիմնախնդիրներին, մասնավորապես՝ միգրանտների տարբեր կատեգորիաների իրավունքներին, նրանց աշխատանքի տեղավորմանն ու աշխատանքային պայմանների բարելավմանը, սոցիալական, կենսաթոշակային ապահովմանը, միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավական կարգավիճակի հստակեցմանը (էջեր 63-64):

Հետազոտության արդյունքում ատենախոսը եզրակացնում է, որ ՀՀ միգրացիոն ներպետական օրենսդրությունը իր հիմնական կողմնորոշիչներով համապատասխանում է միգրացիոն գործընթացների կարգավորման միջազգային իրավական նորմերին ու սկզբունքներին:

Հայաստանի Հանրապետությունը, միգրացիոն քաղաքականությունը ձևավորելիս և գործնականում իրականացնելիս, ձգտում է պահպանել հավասարակշռությունը իր ազգային առաջնահերթությունների և միգրանտների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ապահովելու միջև (էջ 75):

Ատենախոսության երկրորդ գլուխը վերաբերում է ՀՀ-ում միգրացիայի սահմանադրաիրավական կարգավորման ինստիտուցիոնալ հիմնախնդիրներին: Ըստ այդմ, ուսումնասիրվում են միգրացիոն գործընթացների կարգավորման ներպետական իրավական կառուցակարգերը՝ դրանք համադրելով միջազգային փորձի հետ և կատարելով համեմատա-իրավական վերլուծություն: Հետազոտվում են նաև

միգրանտների սահմանադրահիրավական կարգավիճակը միգրացիոն գործընթացների իրավակարգավորումների ինստիտուցիոնալ համակարգում, միգրացիոն իրավահարաբերությունները և դրանց ժամանակակից դրսևորումները հայ միգրանտների իրավունքների պաշտպանության գործում, Հայաստանի Հանրապետությունում միգրացիոն օրենսդրության համակարգը և ռազմավարությունը, դրանց կատարելագործման հիմնական ուղիները:

Հեղինակը հրատապ է համարում Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կարգավորման բոլոր հանձնառությունները պետական մեկ մարմնի շրջանակներում կենտրոնացնելը. «հիմնավոր է այդ առաքելությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայությանը, որը միգրացիայի գործընթացների կառավարման ասպարեզում ունի տարիների փորձառություն: Հավանաբար անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ մտցնել Հայաստանի Հանրապետության միգրացիոն օրենսդրությունում» (էջ 84):

Կարծում ենք, որ ՀՀ միգրացիոն օրենսդրության վերանայումն ու բարեփոխումը ժամանակի հրամայական պահանջն է, որը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության համակարգի նորմատիվ իրավական ապահովման շրջանակներում և հաշվի առնի ինչպես ներքին հիմնախնդիրները, այնպես էլ արտաքին մարտահրավերները՝ Հայաստանը դիտարկելով ոչ միայն որպես միգրացիայի ծագման և տարանցիկ, այլև նպատակակետ երկիր:

Ատենախոսության երրորդ գլխում ուսումնասիրության առարկա են դարձել ՀՀ միգրացիոն քաղաքականության առանձնահատկությունները, իրավական բովանդակությունն ու իրականացման հիմնախնդիրները, միգրացիոն գործընթացների փոխակերպումները և դրանցից բխող մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում, քննարկվում են միգրացիոն քաղաքականության վերազգային բնույթը և արտասահմանյան երկրներում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կարգավիճակը, անօրինական միգրացիան և դրան հակազդեցության ռազմավարությունը Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ-ից անկանոն միգրացիայի կանխման ու դրա դեմ պայքարի իրավական հիմնախնդիրները:

Ատենախոսության չորրորդ գլուխը վերաբերում է միգրացիոն արդի գործընթացների առանձնահատկություններին, Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային միգրացիայի խնդիրներին և դրանց կարգավորման կառուցակարգերին:

Առանձին ենթագլուխներ են նվիրված Անկախ պետությունների համագործակցության և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների շրջանակներում միգրացիոն հարաբերությունների կարգավորման ու միգրացիոն գործընթացների կառավարման ինստիտուցիոնալ հիմունքներին, միգրացիայի գործընթացների կարգավորման տեղեկատվական ապահովվածությանը, նպատակակետ երկրում, նոր միջավայրում միգրանտների իրավական և սոցիալ-տնտեսական հարմարման, նրանց ինտեգրման ու վերաինտեգրման գործընթացներին:

Ուսումնասիրվել են Արցախի Հանրապետության քաղաքացիության հիմնախնդիրները միգրացիոն գործընթացների համակարգում, քննարկվել դրանց լուծման առանձնահատկություններն ու ուղիները:

Ուսումնասիրության արդյունքները ներկայացված են աշխատանքի ամփոփիչ **«Եզրակացություններ ու առաջարկություններ»** մասում:

Հետազոտության հիմնական տեսական դրույթները, եզրակացություններն ու գիտագործնական առաջարկությունները հրապարակվել են ատենախոսի մենագրությունում և քսաներկու գիտական հոդվածներում:

Կատարած հետազոտության արդյունքում Ա. Հայրապետյանն առաջարկում է բարձրացնել ՀՀ միգրացիոն ծառայության կարգավիճակը՝ այն դարձնելով ՀՀ կառավարության անմիջական ենթակայությամբ գործող պետական կոմիտե, վերապահելով նրան ոլորտի կառավարման համահավաք գործառույթներ (էջ 381):

Ատենախոսության երկու հավելվածները բովանդակում են կոնվենցիաների նախագծեր՝ պետությունների վիրտուալ տարածքը (սահմանը) և վիրտուալ աշխատանքային միգրացիան ճանաչելու և իրավակարգավորման ենթարկելու մասին և արհեստական բանականության իրավասուբյեկտության ճանաչման վերաբերյալ:

Կարծում ենք, որ ներկայացված ատենախոսությունն ունի տեսական և գործնական նշանակություն, կարող է նպաստել ՀՀ միգրացիոն քաղաքականության նորմատիվ իրավական և կազմակերպական հիմքերի կատարելագործմանը, նշված ոլորտում օրենսդրական և կառուցակարգային բարեփոխումների իրականացմանը:

Միաժամանակ, գտնում ենք, որ կատարված հետազոտությունը զերծ չէ թերություններից:

1. Հստակ ներկայացված չէ ուսումնասիրության գիտական նորույթը: Այն ձևակերպված է հետևյալ կերպ. «Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ, հաշվի առնելով ժամանակակից օրենսդրությունն ու նորագույն տեխնոլոգիաները, ուսումնասիրելով միգրացիոն քաղաքականության վերաբերյալ հայեցակարգերը և

միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրների տարբեր տարրերի տեսական հետազոտության հիման վրա մշակվել են Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման տեսակը և կիրառական հիմնախնդիրների լուծման ժամանակակից հայեցակարգը: Հիմնավորվել է դրա տեսական և կիրառական նշանակությունը» (էջ 13):

Այս ձևակերպումից այդքան էլ պարզ չի դառնում, թե Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականության սահմանադրաիրավական կարգավորման ինչ տեսակի մշակման կամ կիրառական որ հիմնախնդիրների լուծման ժամանակակից հայեցակարգի մասին է խոսքը, կամ չի բացահայտվում, թե որն է այդ հայեցակարգը, առավել ևս, որ ՀՀ Սահմանադրությունը չի բովանդակում միգրացիայի հասկացությունը, ուղղակիորեն չի սահմանում միգրացիոն գործընթացների իրավական կարգավորման հիմունքները, չի նախատեսում ինստիտուցիոնալ և գործառութային կառուցակարգեր՝ միայն 40-րդ հոդվածում ամրագրելով ազատ տեղաշարժվելու իրավունքը, ըստ որի Հայաստանի Հանրապետության տարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք, յուրաքանչյուր քաղաքացի և Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու իրավունք:

Բացի այդ, Սահմանադրությունն ամրագրում է ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները (40-րդ հոդվածի 4-րդ մաս), իսկ 19-րդ հոդվածում սահմանում է Հայաստանի Հանրապետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ հայկական սփյուռքի հետ իրականացնելու համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստելու հայրենադարձությանը, միջազգային իրավունքի հիման վրա նպաստելու այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

2. Հեղինակը, ի թիվս այլ բնութագրերի, սահմանում է, որ «բնակչության միգրացիան սոցիալ-տնտեսական, նորմատիվ իրավական երևույթ է, որն առանձնանում է ընդգրկման ծավալներով և բազմազանությամբ» (էջ 31) կամ նշում է, որ «միգրացիան բազմաբնույթ սոցիալ-տնտեսական և քաղաքական երևույթ է. . .» (էջ 33):

Մեր կարծիքով, բնակչության միգրացիան ոչ թե սոցիալ-տնտեսական, քաղաքական, նորմատիվ իրավական երևույթ է, այլ բարդ գործընթաց, որն ունի սոցիալ-տնտեսական, քաղաքական, բարոյա-հոգեբանական և բազմաթիվ այլ պատճառներ,

առաջացնում է սոցիալական, տնտեսական և այլ հետևանքներ, միաժամանակ, հանդիսանում է նորմատիվ իրավական կարգավորման առարկա, ենթադրում է սուբյեկտների՝ որպես միգրացիոն հարաբերությունների մասնակիցների իրավական կարգավիճակի հստակեցում, հարաբերությունների կանոնակարգում:

3. Ատենախոսության տարբեր մասերում (էջեր 59-61, 166-167, 244, 254, 260, 322 և այլն) անդրադարձ է կատարվում ՀՀ միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ավարտված ծրագրին՝ հաստատված ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 37 արձանագրային որոշմամբ, սակայն չի ուսումնասիրվում ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 801-Լ որոշումը: Միայն օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ցանկում, ի թիվս այլ որոշումների, նշվում է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի N 801-Լ որոշումը, որին սակայն հղում չի արվում ուսումնասիրության հիմնական մասում, չեն վերլուծվում նշված որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը» (հավելված 1) և «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգի գործողությունների ծրագիրը» (հավելված 2):

Հեղինակը, ընդհանրական մոտեցում ցուցաբերելով, հավելվածներում ներկայացրել է կոնվենցիաների նախագծեր: Կարծում ենք, որ հետազոտությունն առավել օգտակար կլիներ, եթե նախընթաց փորձի և արդի իրողությունների հաշվառմամբ, ապագայի հնարավոր զարգացումների կանխատեսման և արդյունավետ կարգավորման անհրաժեշտությունից ելնելով, հավելվածում առաջարկվեր «Միգրացիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծ կամ ձևակերպվեին նախագծի հիմնական դրույթները:

4. Ատենախոսությունում կարևորվում են միգրացիոն իրավունքը, միգիացիայի հետ կապված բազմաբնույթ հարաբերությունների օրենսդրական կարգավորումը, միաժամանակ, բազմիցս նշվում է միգրացիայի իրավական կառավարման մասին (էջեր 76, 77, 80, 83, 88, 89, 90, 93, 103, 104, 146, 380, 381, 382): Մասնավորապես, ատենախոսության 381-րդ էջում արվում է այն եզրակացությունը, որ «Միգրացիայի իրավական կառավարումը պետք է ծառայեցնել պոտենցիալ միգրանտների իրավագիտակցության բարձրացմանը, որն անհրաժեշտ նախապայման է արտերկրում հայ միգրանտների՝ տեղի օրենքների շրջանակներում իրավունքների

պաշտպանությանը»: Կամ՝ ուսումնասիրության հիմնական մասն ավարտվում է հետևյալ դիտարկումներով. «ՀՀ-ում միգրացիոն գործընթացների իրավական կառավարումը կարող է լինել արդյունավետ, եթե ուղեկցվի երկրում սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բարեփոխումներով: Դա ամենևին չի նշանակում նվազեցնել միգրացիայի գործընթացների իրավական կառավարման նշանակությունը: Վերջինս հիմք է դառնում նաև ՀՀ-ում այդ ոլորտի կառավարման պատասխանատուների տեսական պատրաստվածության աճի և նրանց գործունեության արդյունավետության բարձրացման համար» (էջ 382):

Կարծում ենք՝ ճիշտ բնութագիրը ոչ թե միգրացիայի իրավական կառավարումն է, այլ միգրացիոն գործընթացների իրավական կարգավորումը, քանի որ իրավունքը անձի, հասարակության և պետության համար կարևոր հարաբերությունների նորմատիվ կարգավորիչ է, առանց որի անհնարին է ցանկացած ոլորտի արդյունավետ կառավարումը:

5. Ուսումնասիրության մեջ հղում է կատարվել ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգրքի 132, 132.2, 132.3, 178, 188, 324, 325, 326, 329, 329.1 և այլ հոդվածներին (էջեր 258, 264, 267, 278)՝ վերլուծելով դրանք որպես գործող իրավանորմեր, անդրադարձ չկատարելով 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան դրույթներին, մասնավորապես անօրինական միգրացիայի կազմակերպման հանցակազմը բովանդակող 470-րդ հոդվածին:

6. Պաշտպանության ներկայացվող ութերորդ դրույթի համաձայն՝

«8. Բացահայտելով «միգրացիա» եզրույթի իրավական կատեգորիայի էությունը, հետազոտության արդյունքներով հիմնավորվել է, որ այն ընկալվում է որպես քաղաքացու տեղաշարժ մի պետության (այդ թվում՝ վիրտուալ) տարածքից մյուսը, որի քաղաքացին չէ նա՝ նպատակ հետապնդելով իրականացնել աշխատանքային, ուսումնական, գիտական, մշակութային և այլ գործունեություն» (էջ 19):

Վիճելի ենք համարում քաղաքացու «տեղաշարժը» թվային միջավայրում կամ «նավարկությունը» վիրտուալ «օվկիանում», համացանցային տարբեր ծրագրերից կամ էլեկտրոնային համակարգերից օգտվելը փաստացի «միգրացիա» որակելը, կամ դժվարանում ենք «միգրանտ» կոչել հեռավար սեմինար կամ դասընթաց վարող, գիտաժողովին առցանց մասնակցող անձին:

7. Պաշտպանության ներկայացվող դրույթներից են «հայկական սփյուռք» և «հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակ» հասկացությունների հեղինակային սահմանումները (էջ 20): Համաձայն 9-րդ դրույթի ա) պարբերության՝

«ա) հայկական սփյուռքը Հայաստանի Հանրապետության պետական սահմանից դուրս՝ մշտապես կամ տևական ժամանակահատվածով բնակվող, ազգային զաղափարախոսության ելակետային սկզբունքներով առաջնորդվող, լեզվամշակութային, կրոնական և այլ էթնիկ ինքնության պահպանման ու զարգացման շահերով առաջնորդվող էթնիկ հայերի կայուն կազմակերպված սոցիալական բջիջների ամբողջությունն է, որն ունի սահմանադրաիրավական կարգավիճակ իր հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում»:

Այս դրույթի հետ չենք կարող համաձայնել, քանի որ հայկական սփյուռքը իր հայրենիքում՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրաիրավական կարգավիճակ չունի:

ՀՀ Սահմանադրության միայն մեկ՝ 19-րդ հոդվածն է վերաբերում հայկական սփյուռքի հետ կապերին, սակայն դա «հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակ»-ի ամրագրում չի նշանակում:

Ատենախոսը ձևակերպել է նաև հետևյալ սահմանումը՝

«բ) հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակը Հայաստանի Հանրապետության պետական-իրավական վերաբերմունքն է հայկական սփյուռքի նկատմամբ, որն արտահայտվում է իրավական, քաղաքական, մշակութային, տնտեսական, սոցիալական, անվտանգության և այլ բնագավառներում հայկական սփյուռքին Հայաստանի Հանրապետությունում հատկացված տեղով և դերով»:

Կարծում ենք, որ «պետական-իրավական վերաբերմունքը» չի կարող համարվել «հայկական սփյուռքի սահմանադրաիրավական կարգավիճակ»:

8. Ատենախոսը՝ որպես պաշտպանության ներկայացվող յոթերորդ դրույթ, առաջարկում է ՀՀ Սահմանադրության առաջին գլխում՝ սահմանադրական կարգի հիմունքներում, ինչպես նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին նվիրված երկրորդ գլխում ներառել նորմեր միգրացիոն իրավահարաբերությունների սուբյեկտների մասին, մասնավորապես՝

«դ) ներգաղթյալների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում և կարգավորվում են Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով...», կամ՝

«ե) Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող անձինք իրենց կարգավիճակով հավասարեցված են Հայաստանի Հանրապետության քաղա-

քաղաքացիներին, բացառությամբ Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի··· և այլն» ((էջեր 18-19):

Գտնում ենք, որ գործող Սահմանադրությունն արդեն իսկ համապատասխան իրավակարգավորումներ է նախատեսում՝ իրավունքներ և ազատություններ սահմանելիս հիսուն անգամ գործածելով «յուրաքանչյուր ոք» բառակապակցությունը և ընդամենը հինգ անգամ օգտագործելով «յուրաքանչյուր քաղաքացի» բառակապակցությունը և այն էլ՝ քաղաքական իրավունքների սահմանման հետ կապված:

«Յուրաքանչյուր ոք» հասկացությունը ներառում է բոլոր սուբյեկտներին՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից, և իրավունքների ու ազատությունների հասցեատեր է ճանաչում ՀՀ քաղաքացուն, երկքաղաքացուն, քաղաքացիություն չունեցող անձին, ներգաղթյալին, փախստականին, օտարերկրացուն, ՀՀ-ում օրինական հիմքով գտնվող յուրաքանչյուր անձի:

9. Ատենախոսությունը զգալի գործնական նշանակություն կունենար, եթե բովանդակեր կոնկրետ խնդիրների լուծման ուղիներ, օրինակ՝ առաջարկեր անձը հաստատող փաստաթուղթ չունեցող մարդկանց, քաղաքացիությունը կորցնելու վտանգի տակ գտնվող անձանց, պատերազմների հետևանքով հայրենազրկված բնակչության աջակցության և իրավունքների պաշտպանության կառուցակարգեր:

Ատենախոսության մեջ քանիցս նշվել է Հայաստանի Հանրապետություն սիրիահայերի հոսքի մասին, կարևորվել են նրանց ինտեգրմանն ուղղված աշխատանքները (էջեր 117, 132), այդուհանդերձ, չեն ուսումնասիրվել սիրիահայերի հետ աշխատանքների համակարգման նպատակով ՀՀ սփյուռքի նախարարության ներդրած գործուն կառուցակարգերը, որոնք կարող են օգտակար լինել ծանր իրավիճակում հայտնված և Հայաստան եկած մեր հայրենակիցների, հայրենադարձների, բռնի տեղահանվածների, ինչպես նաև օտարերկրացիների հետ աշխատանքները կազմակերպելիս, նրանց տարաբնույթ կարիքների բացահայտմանն ու բավարարմանը միտված կառուցակարգեր մշակելիս ու կիրառելիս:

10. Կարծում ենք՝ ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակն ուսումնասիրեր և վերլուծեր հայկական համայնքների իրավական կարգավիճակը տարբեր պետություններում (օրինակ՝ հայերը Իրանի Իսլամական Հանրապետությունում ունեն կրոնական կազմակերպության կարգավիճակ, Արևմտյան Եվրոպայի երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, գրանցված են որպես հասարակական կազմակերպություն, Արևելյան Եվրոպայի երկրներում ունեն ազգային

փոքրամասնության կարգավիճակ, Լիբանանում հայ համայնքը ճանաչվում է որպես սահմանադրական հիմնադիր համայնք և այլն), ներկայացներ հայ միգրանտների ազգային նույնականացման և կարգավիճակի բարելավման ուղիները:

11. Գտնում ենք, որ ատենախոսությունն առավել արդիական և օգտակար կլիներ, եթե պաշտպանության ներկայացնելուց առաջ վերանայվեր՝ հաշվի առնելով վերջին երկու տարվա իրադարձությունները՝ 2020 թվականի Արցախյան քառասունչորսօրյա պատերազմի, ապա նաև ռուս-ուկրաինական զինված հակամարտության արդեն իսկ տեսանելի հետևանքները, եթե ուսումնասիրվեր և ներկայացվեր Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող եվրոպական սանկցիաների, տարբեր ոլորտներում սահմանափակումների և աշխարհաքաղաքական այլ իրադարձությունների բերումով ՀՀ-ում ձևավորված նոր միգրացիոն պատկերը, անդրադարձ կատարվեր Արցախից Հայաստան եկած մեր հազարավոր հայրենակիցներին, Հայաստան ժամանած բազմաթիվ ռուս մասնագետներին, առաջարկվեին ստեղծված իրավիճակում նրանց հետ արդյունավետ աշխատանքի նոր կառուցակարգեր ու մոտեցումներ՝ միտված միգրանտների իրավունքների ապահովմանը, ինչպես նաև Հայաստանի՝ որպես միգրացիոն գործընթացների առանցքում գտնվող և միգրանտներ ընդունող երկրի վարկանիշի բարձրացմանը:

12. Մեր կարծիքով, ուսումնասիրության արդյունքում արված եզրահանգումներն առավել հիմնավոր կլինեին, եթե հեղինակը սոցիոլոգիական հարցում կատարեր որոշակի թվով միգրանտների շրջանում: Այս ճանապարհով հնարավոր էր անմիջապես էմիգրանտներից և իմիգրանտներից պարզել արտագաղթողների և ներգաղթյալների խնդիրները, բացահայտել նրանց կարիքներն ու ակնկալիքները, լեզվի, ազգային մշակույթի պահպանման, առողջապահական, կրթական, աշխատանքային և այլ իրավունքների ու օրինական շահերի իրական ապահովման, նրանց սոցիալական հարմարման աստիճանը, Հայաստանից արտագաղթելու հիմնական պատճառները, Հայաստանում հարմարման գործընթացում հանդիպող դժվարությունները և ըստ այդմ՝ ներկայացվեին արտագաղթի կանխման միջոցներ, ներգաղթյալների աջակցության ուղիներ, միգրացիոն գործընթացների սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգեր:

Ուսումնասիրության եզրափակիչ մասում ներառված առաջարկությունների մի մասը որակվել է որպես «Տեսական հանձնարարականներ» (էջ 376), ինչը կարծում ենք գիտական էթիկայի տեսանկյունից այդքան էլ ճիշտ չէ, և առավել ընդունելի է «Տեսական առաջարկություններ» ձևակերպումը:

Ատենախոսությունը զերծ չէ օտար եզրույթներից (ադապտացիա, ինստիտուցիա, ինովացիա և այլն), բովանդակում է տարիների վաղեմություն ունեցող վիճակագրական տվյալներ (էջեր 56, 57, 58 և այլն) կրկնություններ ու վրիպակներ (էջեր 15, 33, այլ), սակայն վերը նշված դիտարկումները չեն ստվերում ներկայացված աշխատության գիտական արժեքը, տեսագործնական նշանակությունը:

Այսպիսով, Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» թեմայով դոկտորական ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ Ռուզաննա Հակոբյան

Ռ. Հակոբյանի ստորագրությունը
հաստատում եմ:

Գավառի պետական համալսարանի
գիտական քարտուղար, բանասիրական
գիտությունների թեկնածու, դոցենտ Թաթուլ Ասոյան
21.10.2022թ.